**Հավելված**
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
2022 թվականի հունիսի 9-ի  N 149-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

**Թումանյան համայնքի «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի.**

**1.**Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացիները ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2)հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները.

3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

**1.1*. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են*՝**

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3)համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**2.Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը (նյութերը).**

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3)քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

*Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:*

***3.*** Մրցույթը կանցկացվի ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Թումանյան,քաղաք Թումանյան, Կենտրոնական փողոց , շենք 1), ***2022 թվականի հուլիսի 21-ին, ժամը ՝ 12:00-ին:***

**4 .**Դիմումներն ընդունվում են Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմում հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Թումանյան, քաղաք Թումանյան, Կենտրոնական փողոց , շենք 1, հեռ.՝ 098 04-80-46), ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ ***2022 թվականի հուլիսի 11-ը՝ ժամը 18:00-ն :***

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ